

ԱՇՈՏ ԱՂԱՍՈՒ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Աղասու Մելքոնյանը ծնվել է 1961 թ. փետրվարի 16-ին Ախալքալաքում վաստակավոր ժուռնալիստ Աղասի Հարությունի Մելքոնյանի ընտանիքում: 1977 թ. նա ոսկե մեդալով ավարտել է Ախալքալաքի Դերենիկ Դեմիրճյանի անվան թիվ 4 հայկական միջնակարգ դպրոցը: 1971-1976 թթ. սովորել է Ախալքալաքի երաժշտական դպրոցում: 1977 թ. ընդունվել և 1982 թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1982-1985 թթ. եղել է նույն համալսարանի Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ: 1989 թ. Ա. Մելքոնյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Արևմտյան Հայաստանի Երզրունի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին» թեմայով:

1986 թ. հոկտեմբերին Աշոտ Մելքոնյանն աշխատանքի է անցել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտում, նախ՝ որպես լաբորանտ, ապա գիտաշխատող, գիտական քարտուղար և գիտական հարցերի գծով փոխտնօրեն: 2002 թվականի ապրիլի 26-ին նա պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» թեմայով: 2002 թ. հուլիսից Ա. Մելքոնյանը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրենն է: 2004 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում:

Աշոտ Մելքոնյանի աշխատությունները նվիրված են Արևմտյան Հայաստանի, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, Ջավախքի պատմության, հայ-վրացական հարաբերությունների, Հայաստանի պատմական ժողովրդագրության, պետականության պատմության հիմնահարցերին: Նա շուրջ 19 գրքի և ավելի քան 450 գիտական հոդվածների հեղինակ է: Նրա «Երզրուն» մենագրությունը (Երևան, 1994 թ.) և Արևմտյան Հայաստանի գավառներին ու բնակավայրերին նվիրված մոտ 30 հոդվածներն արժանացել են «Հայաստան» համահայկական հիմնադրամի գլխավոր մրցանակին, իսկ «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» աշխատությունը (Երևան, 2003 թ.)՝ «Գուրգեն Մելիքյանի Քաջաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամի դրամաշնորհին և Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակին: Մելքոնյանի աշխատությունները լույս են տեսել ավելի քան 15 երկրներում շուրջ 10 լեզուներով: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 19 թեկնածուական ատենախոսություն, որոնք նվիրված են եղել Հայաստանի պատմական ժողովրդագրության և ցեղասպանության թեմաներին: Խմբագրել է տասնյակ գիտական աշխատություններ: Ա. Մելքոնյանը զեկուցումներով մասնակցել է միջազգային բազմաթիվ գիտաժողովների, դասախոսություններով և ելույթներով հանդես եկել արտասահմանում:

Գիտական աշխատանքն Աշոտ Մելքոնյանը զուգակցում է մանկավարժական գործունեության հետ: Նա հայոց պատմություն է դասավանդում Երևանի պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում: 2004 թ. հունիսից մինչև

2006 թ. դեկտեմբերը համատեղության կարգով զբաղեցրել է բժշկական համալսարանի հասարակական գիտությունների ամբիոնի վարիչի պաշտոնը: Բազմիցս ուխտագնացություն է կատարել Արևմտյան Հայաստան, որտեղ նկարահանած տեսանյութի հիման վրա պատրաստել է հեռուստատեսային ֆիլմեր («Կարոտի էրգիր» (2006), «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» (2008) և այլն): 2007 թ. օգոստոսի 10-ին նա բարձրացել է Արարատ լեռան գագաթը:

Ա. Մելքոնյանը գլխավորում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական և պատմության ինստիտուտում գործող 004 Հայոց պատմության մասնագիտական խորհուրդները, ԵՊՀ խորհրդի, պատմության ֆակուլտետի, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, Երևան քաղաքի պատմության թանգարանի գիտական խորհուրդների և մի քանի գիտական հանդեսների (Պատմաբանասիրական հանդես, Լրաբեր հասարակական գիտությունների, Բանբեր հայագիտության, Вестник гуманитарных и юридических наук (Ставрополь, Северо-кавказский федеральный университет), Կանթեղ, Բանբեր Հայաստանի արխիվների, Վեմ և այլն) խմբագրակազմերի անդամ է:

Պատմագիտության բնագավառում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար ՀՀ նախագահի 2003 թ. հոկտեմբերի 8-ի հրամանագրով Աշոտ Մելքոնյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի», իսկ 2005 թ. ՀՀ վարչապետի հրամանով՝ Հայոց ցեղասպանության 90-ամյակի միջոցառումներին ակտիվորեն մասնակցելու համար մեդալներով: Պարգևատրվել է նաև այլ մեդալներով (ԵՊՀ, Երևանի բժշկական և մանկավարժական համալսարանների ոսկե, Գարեգին Նժդեհի, Անդրանիկ Օզանյանի, Ֆրիտյոֆ Նանսենի, Ակսել Բակունցի անվան մեդալներ): 2009 թ. օգոստոսին նրան շնորհվել է Ախալքալաքի պատվավոր քաղաքացու կոչում: 2015 ստացել էրևանի քաղաքապետարանի «Արգիշտի Առաջին» մեդալ: 2018 թ. փետրվարի 19-ին Արցախի Հանրապետության նախագահի կողմից պարգևատրվել է Վաչագան Բարեպաշտ մեդալով:

2006 թ. դեկտեմբերի 15-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2014 թ. դեկտեմբերի 27-ին՝ ակադեմիկոս:

Կինը՝ Լուսինե Վլադիմիրի Ամիրջանյանը Երևանի պատմության թանգարանի փոխտնօրենն է: Դուստրը՝ Անին, ԵՊՀ եվրոպական լեզուների ֆակուլտետի շրջանավարտ է: